

Էլթընի Ուղեգրութիւնը, որուն հոս մասնաւոր դրուխով մը կ'անդրադառնամ, իրապէս արժէքաւոր է իր ամբողջութեան մէջ, իբր մանրամասն տեղեկագիր մը այն ատենուան Կովկասեան առեւտուրի մասին:

Կը ցաւիմ, որ այս դործը¹⁾ ամբողջութիւնով կարենամ թարգմանաբար ներկայացնել հոս: Սակայն, պիտի ջանամ կարելի եղած մանրամասնութեամբ նիւթիս հետ կապ ունեցող մասերը թարգմանել ու ի հարկին ծանօթագրել:

Էլթըն ընկերակցի մը հետ 14 մարտ 1738-9-ին Մոսկուայէն ճամբայ կ'ելլէ: 15 ապրիլին Սարաթօֆ կը հասնի: Սակայն իր ակնկալութեան հակառակ, Հայ վաճառականները արդէն Վոլկայով մեկնած էին Աստրախան, ուր կ'աճապարէ մեր Անդլիացին իր ընկերոջ հետ, յուսալով գոնէ Աստրախանի մէջ միանալ Հայ առեւտրականներուն, անոնց հետ միասին Կասպից ծովուն վրայ ճամբորդելու համար:

«Հոս գտանք Հայերու ընկերութիւնը, որուն այնքան կը ցանկայինք ընկերանալ: Անոնց նպատակը իրենց ապրանքը Յարինայի նաւերէն մէկուն վրայ բեռնալն էր: Նաւը

1) Այս ուղեգրութիւնը A Journey Through Russia into Persia by Two English Gentlemen: Հրատ. 1742-ին London. Գործը իկ հատոր մըն է, սակայն խիստ հազուադիւտ եւ կարեւոր: J. Hanway օգտուած է Տեղեկագրէն եւ, սակայն, հատորս ունի կարեւոր մանրամասնութիւններ: Երկու անգլիացիներն են John Elton եւ Mungo Craeme (Graham):

մօտաւորապէս երեք շաբաթէն Ռէշտ պիտի մեկնէր:

«Մենք ունէինք այս ամբողջ ժամանակամիջոցը ինքզինքնիս ծանօթացնելու համար Պարսից առեւտուրին, եւ թէ ինչպէս ան յառաջ կը տարուէր Ռուսերու եւ Հայերու կողմէ: Մենք վերջինները շատ դժուարակամ գտանք մեզի ծանօթութիւն տալու մէջ: Անոնք կը վախնային, որ մենք գուցէ եկած էինք իրենց հետ մասնակից ըլլալու իրենց շահերուն: Որով՝ մենք որոշ կերպով չէինք կրնար վստահել՝ ինչ որ անոնք կը տեղեկացնէին մեզի: Անոնք կ'ըսէին թէ՛ սակէ առաջ Աստրախանէն դէպի Պարսկաստան առեւտուրը բաց էր եւ ազատ եւ թէ Պարսկաստան ապրանք ներմուծող օտար վաճառականներ կրնային տանիլ իրենց ապրանքները, ինչ հրապարակ որ ցանկային առաւելապէս, եւ ծախել որու որ կ'ուզէին: Սակայն, այս տարի ինչ ապրանք որ Ռէշտ կը հասնի, պէտք է հոն վաճառուի: Եւ թէ Շահը թոյլ չի տար ոչ մէկուն գնել բացի իր վաճառականներէն: Օտար վաճառականներ կրնան պահել իրենց ապրանքը, եթէ Շահին վաճառականներուն տուած գինը զիրենք չի գոհացընել, բայց չեն կրնար իրենց ապրանքը որեւէ ուրիշ հրապարակ տանիլ, կամ որեւէ ուրիշ մը ծախել: Նաեւ թէ՛ Շահը իրեն վերապահած է բոլոր հում մետաքսը: Այնպէս որ, անոնք, որ կ'ուզեն մետաքս գնել, պէտք է դիմեն իր վաճառականներուն, եւ ոչ թէ Պարսկական Սակարանին, ինչպէս որ կը կատարուէր առաջ:

«Մենք նոյնպէս ապահովուեցանք, որ Անգլիական Արեւելեան Հնդկաց Ընկերութեան գործակատարները մեկնած են Սպահանէն: